

# ՆԱՐԵ ԱԹՈՅԱՆ

Վե՛րջ:  
վե՛րջ խելագարությանը...  
վե՛րջ մտքերին... վե՛րջ զանգերին... վե՛ենեերջ...  
վե՞րջ...  
կարող եմ ասել այդ բառը,  
հասկանու՞մ եք,  
կարող եմ,  
դա ամենահեշտն է, որ ես կարող եմ անել.  
«Վերջ»... Լսեցի՞ք...  
նորի՞ց ասեմ...  
կրկնե՞մ  
քանի՞ անգամ...  
ասե՛ք հարյուր, ասե՛ք հազար...  
ես կասեմ,  
համեստ աշակերտի նման կասեմ «վե՛րջ»  
«Վե՛րջ խելագարությանը»  
«Վե՛րջ մտքերին»  
«Վե՛րջ զանգերին»...  
կասեմ...  
կասեմ ու կխեղդվեմ այդ վերջերից...  
կխեղդվեմ դրանց առատության մեջ...  
կխեղդվե՞մ, չեք հասկանու՞մ,  
ես հիմա չեմ հասկանում,  
ինչ է վերջը...  
վերջը դա սկիզբն է զանգերի՞...  
մտքերի՞  
խելագարությա՞ն...  
թե՞ «Օրորոցային» է...  
միգուցե հա՞ց է, կամ ճամփո՞րդ...  
ասե՛ք,  
դա էլ կկրկնեմ  
հարյուր անգամ, հազար անգամ...  
ուզու՞մ եք  
միասին ասե՛նք՝  
«վե՛րջ»...  
միանգամից ասե՛նք՝  
«վե՛րջ»...  
բայց որտե՞ղ է այդ վերջը  
ասե՛ք նրան,  
նրա՛ն,

որ չի լսում,  
չի տեսնում...  
չի զգում...  
նրան,  
որ սիրում է,  
սիրահարված է,  
տարված է...  
նրան,  
որ «վերջ»-ը հասկանում է միայն որպես սկիզբը՝  
մտքերի  
զանգերի  
խելագարության...

\*\*\*

Խո՛սք ասա, լռել կարող են բոլորը...  
Ինչքան պետք է կարծրանամ քո երակներում...  
Հնոցիդ մեջ մի՛ ներարկիր դառնացած կարոտ,  
Աչքերիդ մեջ՝ ամպեր սիրականչ,  
Սպասիր, երբ ձայնս շնչակտուր,  
Բարի լուր ավետող փոստատարի նման  
Դուռդ կթակի՝ մեր այգաբացի մասին հայտնելու:

\*\*\*

Պատերն ուզում են համբուրվել՝  
Վարսերիս է հպել կարոտը:  
Անհետանում են վերմակիս տակ,  
Իսկ բնությունն անվերջ խաղալու է կանչում...  
Ժանգոտված զանգը բողոքում է՝  
Խանգարում են հանգիստը,  
Ես էլ եմ հասկանում,  
Բայց ի՞նչ կարող եմ անել՝  
Հիշողությունս է, լիզում է ուղեղս,  
Ու հոսում առաստաղն ի վեր...

.....

Հույզերիս երակներում կարոտի փոթորիկը մոխրագույն է ներարկում՝  
Պատերը համբուրվում են.  
Ինձ հազիվ դուրս եմ նետում...  
Նետում եմ դուրս, սողում եմ դուրս՝ չորեքթաթ, անհամբեր.....  
Բնության հետ խաղում եմք պաշիկ-պաշիկ...

\*\*\*

Քառակուսին տրոհում եմ շրջանի՝  
Անկարելի է...  
Շրջանաձև սեղանի կոնքերը գրկում ենք ես և նա...  
Պայուսակիս վրայից մեզ է միանում Ջեկսոնը Մայքլ.  
Մատուցողը հեռվից նկատում է նրան,  
Չի մոտենում, չի հարցնում ոչինչ՝  
Մայքլի համար միևնույնն է  
Շրջանաձևն էլ, քառակուսին էլ...  
Օդը տաքանում է սուրճի բուրմունքից:  
Ամենուր քառակուսիներ են,  
Քառակուսիներ, քառակուսիներ...  
Շրջանակ եմ փնտրում,  
Շրջանակներ...  
Ու ապտակում եմ ես՝ ինձ,  
Ես՝ նրան,  
Նրան, որ ապրում է քառակուսու հետ,  
Քառակուսու մեջ,  
Քառակուսու գրկում...  
Համբերություն չկա.  
Կտրտում եմ քառակուսու ծայրերը՝  
Միանգամից,  
Վախեցած,  
Անհամբեր...  
Կտրտում եմ,  
Ու անկյունահատման հուշերը մոլորեցնում եմ ինձ...  
Բացվում է դուռը շրջանակի՝  
Մայքլի հետ շփոթված նայում ենք ներս՝  
Ինչ- որ մեկն սպասում է իմ բարևին:

\*\*\*

Երակներիս մեջ արյունը հակառակ է հոսում,  
Երբ մարմնիս վրա դաջվում է քո ձեռքերի հպումն աներևույթ:  
Դու քնատ հայացքից ծորացող իմ ժպիտը վայելում ես անձայն,  
Այնինչ՝ սիրտս ոտքի է կանգնում քեզ բարևելու:  
Ընդերքն աչքերիդ որսում է բարևն իմ,  
Ու ձուլվում ես դու արյան հոսանքին,  
Չես խեղդվում, սակայն  
Թանձրանում ես իմ երակներում արյան փոխարեն...  
Մահին Ց ասում՝ ծնվում եմ նորեն,  
Երբ քո մատերն են դաջվում մարմնիս:

\*\*\*

Եթե անկոտորուն կամքը քեզ մի պահ,  
Հասցնի անդունդի ծայրին,  
Ո՛ր թե վեհության քո արցունքներում,  
Խեղդել գորավոր քո հոգուն  
Դու չկարենաս,  
Ինձ կանչիր քեզ մոտ,  
Ես կամոքեմ հոգիդ,  
Մարդկության բարին քո մեջ սփռելով՝  
Կմաքրեմ մաղձը տանջող անցյալի:  
Ես կդառնամ քո սրտի կեսը,  
Կդառնանք հզոր, ինչպես Երկրագունդ,  
Որ կամքն իր անգորությանը մեզ չկործանի:

\*\*\*

Ես քնում եմ հեռախոսս գրկած  
Արդեն երեք ամիս:  
Այն օրվանից, ինչ դու հեռացար անխոս՝  
Մի դույլ արցունք դնելով բարձիս տակ:  
Անցած ինը ամսում չէի նկատում քո մեջ  
Ոչ մի հեռանկար,  
Բայց քո հեռանալուց հետո  
Մեջս տեղաշարժեր եղան,  
Ուղեղիս մեջ՝ երկրաշարժ,-  
Արգանդում իմ արձագանքեց հեռանկարը քո:  
Սիրտն իմ տնքալը դադարեցրեց  
Ու սկսեց անհանգիստ մասնատվել...  
Անցած երեք ամիսը դարձավ ինը ամիս՝  
Հեռանկարը քո շուտով բարի օր կասի  
Աշխարհին, մարդկանց... նաև՝ ինձ,-  
Ու ես մայր դառնալու սպասումից հոգնած՝  
Աչք եմ փակում դարձյալ հեռախոսս գրկած:

\*\*\*

Հայելու մեջ զննում ես ատամնաշարս,

Որ գիշերել է ուսիդ:  
Ժպտում ես նրան  
Ու գողտրիկ հայացքդ որոնում է նույն ատամնաշարով քո խենթին՝  
Անկողինը կիսամերկ է...  
Մերկացնում ես նրան՝  
Ոտնաթաթերիդ եմ կանգնում ոտաբոբիկ:  
Քո վերնաշապիկը չափազանց մեծ ես համարում ինձ համար...  
Ուսիդ գիշերած ատամնաշարս մրսում է...

\*\*\*

Եղանակի տեսությամբ հայտնեցին, որ անձրև է գալու:  
Չարաձճի մտքերս միանգամից սղոսկեցին ուղեղիս պատերից դուրս.  
Ու ես գնացի անձրևին ընդառաջ...  
Ողջագուրվեցինք... Մարմինս դողաց,  
Անձրևը զգաց տկարությունս:  
Խոստովանեցի՝ կարոտն է դարձյալ...  
Անձրևը հանգիստ ժպիտով գրկեց հիվանդ մարմնիս,  
Ու... քնաբեր խնդրեց...  
Վայրկյաններ չանցած՝  
Կաթիլ առ կաթիլ հանգրվանեցի հագուստիդ վրա.  
Դու փնթփնթացիր. «Ի՞նչ եղանակ է»,  
Ու շտապելով խանջյան փողոցից թեքվեցի դեպի Բուզանդի փողոց...  
Բոլոր ուժերս միախառնելով՝ փութացի հասնել...  
Հագի՛վ... խորը շնչեցի,  
Ու նուրբ անգսպությամբ թափվեցի այտերիդ՝ կարմիր,  
Հոսեցի շուրթերիցդ ներս...  
Շոյեցի աչքերդ կանաչ...  
Ներծովեցի հագուստիդ մեջ ու գրկեցի մարմինդ հոլանի...  
Կարոտս սլացավ անձրևի հետ իմ տաք անկողնում խոր քուն մտնելու...  
-----  
Եղանակի տեսությամբ կրկին հայտնել են, որ անձրև է գալու...  
Գոլորշիանում են քո տաքության մեջ...

\*\*\*

Գիժ էի մի ժամանակ.  
Ժամերով կառչում էի լուսամուտից  
Ընկնելու աստիճան,  
Ու վախն սպասումից ձանձրույթի բովում  
Ինքն իրեն խեղդում էր հեռախոսի լարով...  
Ձյան վրա քայլում էի սրտաբոբիկ,  
Վիտամին չէի խմում`  
Նոպաների պահին սառույց էի կուլ տալիս,  
Որ նման էր հաբի...  
Անշաքար սուրճը խմում էի sms –ով:  
Մարսում էի...  
Մրսու՞մ էի,  
Չեմ հիշում, երևի... ձմռան մինուսներին,  
Բայց զուգարանից դուրս չէի տնքում անժպիտ...  
Ժամանակի ուսին մոռանում էի հաճախ ստամոքսիս մասին,  
Ու չէի սնվում ռոբոտաբար...

-----  
Մի ժամանակ գիժ էի, անհոգ էի ու հարուստ`  
Բաժանորդն էի սիրո,  
Ու հարկայինը գումար չէր գանձում,  
Քանզի գիժ էի անանձնագիր,  
Անցագիր էլ չունեի ել ու մուտի...

\*\*\*

Անգոյանում է հիշողությունս`  
Որոնումներս կաղում են ցնորքների մեջ...  
Ճեպընթացներում զանգերն աղմկասպան անցյալի  
Հարվածում են բյուրեղիկապատ մոլորակներին  
Մեր նախնիների...

-----

Չկա՛ պատասխան...  
Պատասխան չկա...  
Թոքերիս մեջ թթվածին չկա...

\*\*\*

Քամին հանեց կոշիկներն ու մտավ սենյակ...  
Մենք շարունակաբար լռեցինք...  
Քո երևակայության մեջ հայտնվեցի ես`  
Իմ մտքերում` դու`  
Երկխոսությանը դատապարտվածի նման:  
Քամին չաղմկեց ու շունչը պահած  
Հասավ կոկորդիս...  
Հագս մատնեց ինձ...  
Մթության մեր գաղտնարանում

Ծագեց Արևը՝  
Տան ճամփան բռնեց Սերը մոլորյալ:

\*\*\*

Երեկ նա վիրահատեց ինձ:  
Եղունգներիս վրա փորագրեց իր անունը...  
ամեն մեկի վրա՝ առանձին- առանձին...  
հետո բացեց ուղեղս՝  
թմրեցնելով նրան Eugen Doga-յի Vals-ով...  
հանեց, նետեց բանական միտքս,  
տեղադրեց զառանցանք մի տասնվեցամյա աղջնակի...  
ծախս թևիս երակը գտավ՝ ներարկեց զարնանային իր ժպիտը...  
այսքանն անօգուտ համարեց՝  
ու բիբերիս վրա հարմարեցրեց լինզաներ,  
որ ուղեղիս մեջ տեղադրված զառանցանքի հրամանով  
ամենուր պատկերեն միայն իր հայացքը ...  
հետո իր ձայնի ելևէջները կաթեցրեց ականջներիս մեջ...  
իմ բույրի մեջ թաթախեց վարսերս ...  
ու... հետո...  
հետո դաշնակահարի նուրբ ու սահուն իր մատերով  
նա վիրահատեց ինձ ամբողջովին...

\*\*\*

Ասում է նա՝ նախկին կոմունիստը,  
-Պոռնիկներ, խուժաններ,  
Զ՞եք ամաչում, օր ցերեկով  
Պաչպալում եք այս ծառի տակ,  
Որ հեռու չէ մարդկանց աչքից:  
Բայց և հաջորդ օրը՝  
Լույս ցերեկով  
Միզում է նույն ծառի տակ՝  
Նույն ինքը՝ կոմունիստը նախկին:

\*\*\*

Բավարարված պոետներից, արվեստներից՝  
Տռուզ- տռուզ իր ուղեղը քարշ է տալիս՝  
Կարծելով թե կացարանն է դա հանճարի:  
Լավ էլ գիտի՝ ստամոքից բացի,  
Պետք է սնել նաև ուղեղ:  
Բայց երբ սնում է նա իր փորը...  
Տռզում է ուղեղն անմիջապես՝  
Ինքն էլ ուրախ, քիթը՝ վերև,  
Քարշ է տալիս տռուզ- տռուզ իր ուղեղը՝  
Իր հավատով՝  
Կացարանն իր իմաստության:  
Էլ չգիտի, /ինչ իմանա անուղեղը/  
Որ ուղեղում փորն է տեղավորվել...